

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
20 նոյեմբերի 2014 թ.
Պետական գրանցման թիվ 11814529

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

24 հոկտեմբերի 2014 թ.
ք. Երևան

N 733-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՀԵՏՈ ԾԱԳԱԾ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉՄԱՐՎԱԾ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ՎՃԱՐՎԱԾ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 81-րդ հոդվածի 13-րդ մասը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 503-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 14-րդ կետի 4-րդ ենթակետով և կուտակային վճարների գծով գերավճարների վերադարձն ապահովելու նպատակով՝

Հրամայում եմ

1. Սահմանել «2014 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների արդյունքում կուտակային վճարների չմարված կամ մասնակի վճարված կուտակային վճարների պարտավորությունների վերահաշվարկման կարգը» համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ ֆինանսների նախարար՝

Գ. Խաչատրյան

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2014 թ. հոկտեմբերի 24-ի
N 733-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՀԵՏՈ ԾԱԳԱԾ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉՄԱՐՎԱԾ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ՎՃԱՐՎԱԾ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՄԱՆ

1. Կուտակային վճարների պարտավորությունների վերահաշվարկման և կուտակային վճարների գումարները վարձու աշխատողներին (պայմանագրային եկամուտ ստացողներին) վճարելու կարգը.

1) Սույն կարգի իմաստով վերահաշվարկման ենթակա է 2014 թվականի հունվարի 1-ից հետո ընկած այն հաշվետու ժամանակաշրջանների համար հաշվարկված կուտակային վճարները, որոնք մարված չեն (փոխանցված չեն մասնակիցների ռեեստրը վարողի հաշվին):

2) Կուտակային վճարի պարտավորությունների վերահաշվարկները կատարվում են մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը:

3) Գործատուի կողմից վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացողի (այսուհետ՝ մասնակից) աշխատավարձից և պայմանագրային եկամտից պահված (հաշվարկված) կուտակային վճարները (այդ թվում՝ ստուգված կամ ստուգման ընթացքում գտնվող հաշվետու ժամանակաշրջանների) անձնավորված հաշվառման համակարգում ենթակա են վերահաշվարկման հարկային մարմնի կողմից հետևյալ կարգով՝

ա. հաշվարկված (այդ թվում՝ հարկային մարմին ներկայացված ճշտված հաշվարկի հիման վրա առաջացած), սակայն չվճարված (այդ թվում՝ մասնակի վճարված) կուտակային վճարների գումարները ենթակա են գրոյացման.

բ. կուտակային վճարների գրոյացման արդյունքում առաջացած գերավճարները ենթակա են վերադարձման գործատուներին:

4) Այն հաշվետու ժամանակաշրջանների կուտակային վճարի գումարները, որոնք ամբողջությամբ փոխանցվել են գանձապետարանի կամուրջ հաշվին (բացառությամբ ճշտված հաշվարկների հիման վրա ճշգրտված և դրա հետևանքով չմարված կուտակային վճարների), փոխանցվում են մասնակիցների ռեեստրը վարողի հաշվին:

5) Հարկային մարմինը վերահաշվարկ կատարելուց հետո մեկամսյա ժամկետում, սույն կարգի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով իրականացված կուտակային վճարների վերահաշվարկման արդյունքների մասին, ծանուցում է գործատուներին: Ծանուցման մեջ արտացոլվում են գործատուի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև պակասեցված կուտակային վճարի գումարի կամ առաջացած գերավճարի չափը:

6) Կուտակային վճարների պարտավորությունների վերահաշվարկման արդյունքում՝
ա. մասնակցից պահված, սակայն չփոխանցված գումարները գործատուի կողմից վճարվում են ֆիզիկական անձանց,

բ. մասնակցից պահված, սակայն գանձապետարանի կամուրջ հաշվին մասնակի վճարված՝ սույն կարգի 2-րդ կետով նշված կարգով գործատուին վերադարձված գերավճար գումարները վճարվում են ֆիզիկական անձին՝ գերավճարի գումարը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում կանխիկ (վճարման տեղեկագրի հիման վրա) կամ անկանխիկ (անձի հաշվին փոխանցելու միջոցով) եղանակով:

7) 2014 թվականի դեկտեմբերի 31-ից հետո գործատուների կողմից հարկային մարմին ներկայացված ճշտված հաշվարկների հիման վրա կուտակային վճարի պարտավորությունների վերահաշվարկ չի կատարվում:

2. Կուտակային վճարների գծով գերավճարների վերադարձման կարգը.

1) Կուտակային վճարների գերավճարները (այսուհետ՝ գերավճար) վերադարձվում են գործատուի դիմումի (օրինակելի Ձև 1-ը կցվում է) հիման վրա:

2) Գերավճարի վերադարձը կատարվում է գանձապետարանի կամուրջ հաշվից գործատուի բանկային հաշվին համապատասխան գումարի փոխանցման միջոցով:

3) Գերավճարը ենթակա է վերադարձման ոչ ուշ, քան գործատուի կողմից դիմումը հարկային մարմին ներկայացնելու օրվանից հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում (բացառությամբ գերավճարի գումարը հիմնավոր չհամարվելու դեպքերի):

4) Կուտակային վճարի գերավճարը վերադարձնելու վերաբերյալ դիմումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում կամերալ ուսումնասիրության միջոցով վերադարձ կատարելու մասին հարկային (տարածքային) մարմնի կազմած եզրակացությունը

(Ձև 2-ը կցվում է) ոչ ուշ, քան եզրակացությունը կազմելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչություն:

5) Առարկությունների բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչությունը, հարկային (տարածքային) մարմինների կողմից ներկայացված վճարողի գերավճարների վերադարձ կատարելու մասին եզրակացությունները և եզրակացությունների մասին ամփոփ տեղեկանքը (Ձև 3-ը կցվում է), ոչ ուշ, քան դրանք ստանալու օրվան հաջորդող 5-րդ աշխատանքային օրը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն:

6) Եզրակացությունների մասին ամփոփ տեղեկանքի հիման վրա, դրանք ստանալուց ոչ ուշ, քան 4 աշխատանքային օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչությունը գումարները փոխանցում է գործատուների բանկային հաշիվներին:

7) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչությունը վերադարձված գումարների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչություն, որտեղ նշվում են՝

- ա. գործատուի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը,
- բ. գանձապետական համակարգում վճարման (գործառնության) նույնականացման եզակի համարը,
- գ. վճարման օրը, ամիսը, տարեթիվը,
- դ. ստացողի բանկային հաշվի համարը (բանկը, որի միջոցով կատարվել է վճարումը),
- ե. վճարված գումարը:

8) Սույն կետով սահմանված ժամկետները խախտելու համար հարկային մարմնի կամ հարկային ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող է գանգատարկվել «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, եթե այդ ժամկետների խախտման արդյունքում հարկ վճարողին օրենքով սահմանված ժամկետում չեն վերադարձվել գերավճարի գումարները:

3. Հարկային մարմնի կողմից գործատուի անձնական հաշվի քարտում կուտակային վճարների պարտավորությունների վերահաշվարկման արդյունքում կատարվող գրանցումները.

1) Կուտակային վճարների պարտավորությունների վերահաշվարկման արդյունքում այն զրոյացվում է:

2) Հաշվարկված կուտակային վճարների զրոյացման արդյունքում գոյացած բացասական տարբերությունը արտացոլվում է որպես գերավճար:

3) Հաշվարկված (այդ թվում գործատուի կողմից հարկային մարմին ներկայացված ճշտված հաշվարկի հիման վրա առաջացած), սակայն չվճարված (այդ թվում՝ մասնակի վճարված) կուտակային վճարների գումարները ենթակա են զրոյացման:

4) Հարկային (տարածքային) տեսչության կողմից եզրակացության կազմման օրը կատարվում է գերավճարի զրոյացում:

Օրինակելի Ձև 1

(տարածքային) հարկային տեսչություն

ԴԻՍՈՒՄ

Վճարողի գերավճարի վերադարձի համար

(կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

Խնդրում եմ պարտադիր կուտակային վճարի գերավճարի գումարի մնացորդից վերադարձնել դրամով նշված գումարները`

Բանկը, որին պետք է փոխանցել վերադարձման ենթակա գումարը	Հաշվի համարը, որին պետք է փոխանցել վերադարձման ենթակա գումարը	Անձնական հաշվի քարտից վերադարձման ենթակա գումարը (դրամ)

Դիմումի ներկայացման ամսաթիվը _____ 20__ թ.

Տնօրեն կամ անհատ ձեռնարկատեր (անունը, ազգանունը և ստորագրությունը) Հարկ վճարողի կնիքը` Հաշվապահ (անունը, ազգանունը և ստորագրությունը)

Ձև N 2

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N _____

Վճարողի գերավճարների վերադարձ կատարելու մասին

(կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

Գործատուի _____ 20__ թ. ներկայացված դիմումի համաձայն` վճարողի գերավճարի մնացորդից ենթակա է վերադարձման պարտադիր կուտակային վճարներ`

Գանձապետական հաշվի համարը, որից կատարվում է վերադարձ	Բանկը, որին պետք է փոխանցել վերադարձման ենթակա գումարը	Հաշվի համարը, որին պետք է փոխանցել վերադարձման ենթակա գումարը	Անձնական հաշվի քարտից վերադարձման ենթակա գումարը (դրամ)

Գործատուին վերադարձման ենթակա գումարն արձանագրվել է կամերալ ուսումնասիրությամբ, համաձայն _____ 20__ թ. N _____ որոշմամբ:

Եզրակացության կազմման ամսաթիվը _____ 20__ թ.
(Տարածքային) հարկային տեսչություն _____
(անվանումը)

(Տարածքային) հարկային տեսչության պետ _____
(անունը, ազգանունը և ստորագրությունը)

Կ. Տ.

Ձև N 3

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ N _____

Վճարողների գերավճարների վերադարձների մասին

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը ամփոփելով 20____ թ. _____ -ի _____ -ից մինչև 20____ թ. _____-ի _____-ը հարկային (տարածքային) տեսչություններից ստացված եզրակացությունները, տեղեկացնում է, որ գանձապետարանի հետևյալ կամուրջ հաշիվներից ստորև նշված պարտադիր կուտակային վճարների գումարները ենթակա են վերադարձման հարկ վճարողների հետևյալ հաշվարկային հաշիվներին.

Հ/հ	Գազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	ՀՎՀՀ	Գանձապետական հաշիվը, որից կատարվում է վերադարձ	Բանկը, որին պետք է փոխանցել գումարը	Հաշվի համարը, որին պետք է փոխանցել գումարը	Գումարը (դրամ)
Ընդամենը						